ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ԼՂՀ վարչապետի և ԱրՊՀ ռեկտորի հյուրընկալությանը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեծարգո վարչապետ,

Արցախի պետական համալսարանի հարգարժան ռեկտոր,

Տնտեսագիտական համալսարանի հարգարժան ներկայացուցիչներ, հարգելի ուսանողներ, հյուրեր, ներկաներ

Ինձ համար մեծ պատիվ է այսօր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում հյուրընկալել Լեռնային Ղարաբաղի հանրապետության կառավարության ղեկավար՝ մեծարգո Արայիկ Հարությունյանին, ով նաև Արցախի պետական համալսարանի խորհրդի նախագահն է, ինչպես նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր՝ հարգարժան Մանուշ Մինասյանին:

Մեր համալսարանում բարձրաստիճան պաշտոնյաների, հեղինակավոր և հասարակության կողմից ճանաչված անձանց հյուրընկալելու բարի ավանդույթներ կան, ուստի ուրախալի է, որ այսօր մեր բուհի տանիքի ներքո հյուրընկալելու պատեհ առիթ ունենք Ձեզ:

Ցանկանում եմ նշել ևս մեկ ուշագրավ հանգամանք. հետաքրքիր զուգադիպությամբ Լեռնային Ղարաբաղի վարչապետը՝ մեծարգո Արայիկ Հարությունյանը, ինչպես նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր՝ հարգարժան Մանուշ Մինասյանը, սովորել են Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում՝ ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի ազգային տնտեսագիտություն մասնագիտությամբ:

Հարգելի ներկաներ

Անցյալ դարի 80-ականների վերջին սկսվեց հայ ժողովրդի ազատատենչ ոգու ու բռունցքված միասնության փառահեղ տարեգրությունը: Մենք միակամ էինք, համարձակ, վճռական, քանզի մի մեծ երազանք ունեինք՝ ազատագրված տեսնել պատմական Արցախը, ինքնիշխան ու ինքնահաստատ տեսնել հպարտ Արցախցուն:

Մեր նվիրական երազանքներն իրագործելու համար մեզ պարտադրված էր արյունալի պատերազմ, որին նվիրաբերվեց հայ տեսակի ընտրանին՝ քաջաբազուկ, խրոխտ ու հայրենասեր հայորդիներ: Նրանք իրենց անձնազոհությամբ իրականություն դարձրին հայ մարդու երազանքը, ազատագրեցին Արցախը և նախապատրաստեցին նրա ինքնուրույն ու ինքնիշխան գոյությունը:

Այդ երիտասարդների շարքում նաև մեր համալսարանի ուսանողներն ու դասախոսներն էին, որոնք ցած դրեցին գրիչն ու գիրքը և զենք վերցրին: Նրանք միացան ազգային-ազատագրական պայքարին, քանզի գիտեին, որ դա իրենց գործն է ու առաքելությունը:

Հարգելի ներկաներ

Ազատ Արցախը մեր մեծագույն նվաճումներից է, և ինչպես բոլոր հաղթանակները, սա ևս պետք է փայփայել, ամրապնդել պետական շինարարության հաջողություններով: Մենք պարտավոր ենք մեր նպաստը բերել Արցախի պետականաշինության ամրապնդման, սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, իրավական և մյուս բոլոր ոլորտներում հարաճուն զարգացման գործընթացին: Սա է թելադրում մեր ազգային արժանապատվությունը:

Այս տարվա ապրիլի 15-ին մեր համալսարանում ստորագրվեց համագործակցության համաձայնագիր, որով Հայաստանի պետական տնտեսագիտական և Արցախի պետական համալսարանների միջև

գործակցությունը ոչ միայն պաշտոնական տեսք ստացավ, այլև ձևակերպվեց համագործակցության հստակ դաշտ: Մասնավորապես, մեր համալսարանների փոխգործակցությունը կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեության ոլորտներում համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակման, նյութատեխնիկական օժանդակության, Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում համատեղ ուսանողական ճամբարների և ամառային դպրոցների կազմակերպման, համատեղ գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների, մարզական սպարտակիադաների կազմակերպման, խորհրդատվության տրամադրման և այլ հարթակներում է: Թեև համաձայնագրի ստորագրումից հետո շատ ժամանակ չի անցել, բայց արդեն իսկ արվել են որոշակի քայլեր: Մասնավորապես, այս ամռանը մեր հրավերով Տնտեսագիտական համալսարանի՝ Դիլիջանում գտնվող «Տնտեսագետ» մարզաառողջարանում իրենց ամառային հանգիստն են անցկացրել Արցախի պետական համալսարանի մի շարք ուսանողներ: Մենք նախատեսում ենք առաջիկայում այցելել Արցախի պետական համալսարան և այնտեղ իրականացնել որոշակի ծրագրեր, որոնք նույնպես նախատեսված են համաձայնագրով: Մեր համալսարանի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ օրակարգում է Լեռնային Ղարաբաղի որևէ զորամաս այցելելու ծրագիրը: Սրանք մեր գործակցության շրջանակներում արված սկզբնական քայլերն են, գործընթացը շարունակական է լինելու և ներառելու է բոլոր այն կետերը, որոնք ամրագրված են համաձայնագրով:

Հարգարժան պարոն վարչապետ

Անհրաժեշտ եմ համարում խոսել ևս մեկ հարցի մասին, ինչը, կարծում եմ, շատ կարևոր է: Մեր համալսարանը՝ որպես Հայաստանի

տնտեսագիտական ամենախոշոր բուհ, պատրաստ է իր նպաստը բերել Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին: Այսօր, երբ մեր բոլորի աչքի առաջ զարգացման ու վերելքի, առաջընթացի ու ամրացման նոր փուլ է ապրում մեր սիրելի Արցախը, տեղին եմ համարում իմ աջակցությունը հայտնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, կառավարությանը, պետական մյուս մարմիններին: Այս համատեքստում առաջարկում եմ Արցախի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ որևէ հիմնախնդիր, Ձեր առաջարկով, հետազոտության առարկա դարձնել մեր համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: Ծրագիրը կիրականացվի մեր բուհի ֆինանսավորմամբ:

Հուսով եմ, որ մեր համագործակցությունը կլինի շարունակական ու արգասաբեր:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ